**Ձև N 5.5.1**

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 177

*ներքական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքը (Դիլիջան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Դիլիջան համայնքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը | Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաք<br><br>11-003-0223-0030 կադաստրային ծածկագրով 0.625 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր | 11-003-0223-0030 կադաստրային ծածկագրով 0.625 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր | Համաձայն ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքը (Դիլիջան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Դիլիջան համայնքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | **Ե. Վարդանյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «30» «ապրիլի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ ներքին գործերի նախարարության գրությամբ ներկայացված պայմանը (կցվում է):

4. Դիլիջան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Դիլիջան քաղաքի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի (Դիլիջան քաղաքը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: